մարական կոչելով զհրովարտակն Արքայի։ և 'ի ոստկանալ վիճմանց՝ Լատինք դիմեցին առ Դատաւորն, յանցաւոր ցուցեալ զՀայս իբրու թէ արգելուլ կամին զճանապարհ նոցին։ ցուցանելով զհին հրովարտակս իւրեանց, և ապա յաւելին զմեծութիւնս կանթեղացն Հայոց յԱյրին, զսիռոցն անդ 'ի ժամ պատարագի, զհիւսիսային դուռն եւ զպատկերն 'ի վերայ նորա, եւ թէ յառաջագոյն չէր սիռոց, այժմ տիրեալ Հայոց եկեղեցւոյն՝ խափանեցին զճանապարհն, և այլ սոցին նման բանք։ որոց Դատաւորն արար պատասխանի՝ չունիլ իրաւունս և ոչ միոյ իւիք 'ի նոցանէ՝ զի հրովարտակ նոցին էր հին, այլ վասն ճանապարհին խոստացաւ նոցա կոչել զՀայս և տնօրինել, զի ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ։ ապա կոչեալ զՀայս մեղադիր լինէր նոցա, թէ ընդէ՞ր ոչ ազդ արարին ինքեան զհակառակութիւնս Լատինաց, ապա յորդորէր ըզնոսա սիրով վճարել զգործն, զի Բդեշխն ատելութեամբ էր ընդ Հայս։ զի մի 'ի բողոքել Լատինաց քաջալերութիւն գտեալ արկցէ զնոսա 'ի տուգանս, այժմ պարտ է ասէր խօսիլ միայն վասն ճանապարհին, մինչեւ դարձցի Բդեշխն 'ի տեղի իւր, և ապա զամենայն ինչ յօգուտ ձեր կարդաւորեցից։

Ակամայ կամօք խոնարհեցան Հայք ընդ այս՝ յահէ Բդեշխին, զի մի բազմասցին թշնամիք։ Լատինք յուսացեալ էին 'ի բանս Դատաւորին, եւ նա ակն ունէր իւրոց իրաւանց։ և այսպէս յերերիլ գործոյն՝ տարագրեցաւ Դատաւորն, որպէս գրեցաք։ Լատինք վերստին յուզեցին զկռիւն 'ի Բեթղեհէմ, զինեալ զմէլլահ ժողովուրդս բարձին և 'ի բաց ընկեցին զսիռոցն՝ և հարեալ զմիաբանս անցին 'ի միջոյ նոցա։ լուեալ զայս միաբանացն Հայոց յերուսաղէմ, ազդ արարին Լատինաց։ բայց նոքա բարկացեալ չետուն պատասխանի, ուստի հարկ եղեւ դիմել առ Քաղաքապետն, զի մի հեղցի արիւն և կամ վնաս ինչ գործեսցի՝ եւ բացցի դուռն տուգանաց։ Քաղաքապետն կամեցաւ պատժել զմիաբանս Լատինաց Բեթղեհէմի, այլ Հայք ոչ ետուն թոյլ։ զի վնաս մեծ լինէր այն ինքեանց 'ի կողմանէ Բդեշխին, այլ պատուիրել գվանաւորաց նոցին յերուսաղէմ։ եւ եղեւ 'ի խօսիլ նորա ընդ թարգմանի նո-